ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՀՈՒՆՎԱՐԻ 2025թվականի N 0188-Ա

ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի արձանագրությունն այն մասին, որ 07.01.2025թ. ԱՔ-ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/1 ծածկագրով գնման ընթացակարգի 5, 14, 15, 38 չափաբաժիններով ընտրված մասնակից ճանաչված ԱՆԱՀԻՏ-23 ՍՊԸ-ին ուղարկվել է Պայմանագիր կնքելու առաջարկ և առաջարկվել առաջարկը ստանալու օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում հաստատված պայմանագրի նախագիծը կցել e-AUCTION համակարգ, որակավորման ու պայմանագրի ապահովումները և դրանց ներկայացման գրությունը կամ մասնակցի կողմից ընդունվող որոշման մասին տեղեկությունները ներկայացնել փաստաթղթային ձևաչափով առձեռն կամ փոստի միջոցով Արմավիրի համայնքապետարան, սահմանված ժամկետի ավարտից հետո e-AUCTION համակարգ կցվել է հաստատված պայմանագրի նախագիծը, սակայն մասնակցի կողմից չեն ներկայացվել որակավորման ու պայմանագրի ապահովումները՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. ԱՔ-ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/1 ծածկագրով գնման ընթացակարգի 5, 14, 15, 38 չափաբաժիններով որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելու իրավունքից հրաժարված ԱՆԱՀԻՏ-23 ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 04449413, հասցեն՝ Ք. Արմավիր, Հանրապետության 3նրբ 1) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ մասնակիցը խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:
2. Օրենքով սահմանված կարգով սույն որոշումը ներկայացնել լիազորված մարմին և մասնակցին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2025թ. հունվարի 29
ք. Արմավիր